

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԲՐՈՒՏՅԱՆ ՎԱՉԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ**

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ. Հ. Պետրոսյան**

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. Կարապետյան**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Շ. Ծաղիկյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտ 16-ին՝ ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. փետրվարի 14-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկն., դոցենտ՝

Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայաստանյան իրականության մեջ իրավական ոլորտի կայացման խնդիրն այսօր ձեռք է բերել գերակա նշանակություն: Օրենքի վրա հիմնված քաղաքացիական հասարակության ստեղծումը հանդես է գալիս որպես այդ հասարակության բոլոր առողջ ուժերի ընդհանրական խնդիր, որի լուծումը հնարավոր է միայն առկա հնարավորությունների լիարժեք օգտագործման պարագայում: Դրանցից մեկը, ընդամին՝ ոչ նվազ կարևորը, կապված է գիտության ընձեռած հնարավորությունների լիարժեք օգտագործման հետ:

Օրինականության և իրավակարգի ամրապնդումը, հանցագործությունների դեմ պայքարն ամբողջ հասարակության խնդիրն է. այն լուծելու ճանապարհին առաջացած խոչընդոտները պայմանավորված են գործնականում բոլոր ոլորտների (տնտեսական, մշակութային, բարոյական, պետական կառավարման և այլ) անկատարությամբ: Երկար ժամանակ օրինականության և իրավակարգի ամրապնդումը համարվել է զուտ իրավագետների խնդիր: Որքան ավելի ենք մոտենում նոր ժամանակներին, որքան մեծ է իրավական խնդիրների լուծման փորձը, այնքան ավելի է ամրապնդվում այն համոզումը, որ իրավական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծումը համալիր գիտական և գործնական հիմնախնդիր է:

Օրինականության և իրավակարգի ամրապնդման խնդրի լուծման գործընթացին միացել են նաև այլ մասնագետներ: Ստեղծվել են գիտության սահմանային ոլորտներ՝ իրավունքի փիլիսոփայություն, իրավունքի սոցիոլոգիա, իրավապահ ոլորտի կառավարման տեսություն, իրավաբանական հոգեբանություն, դատական հոգեբուժություն և այլն: Սակայն այնպիսի բազմոլորտ գիտություն, ինչպիսին մանկավարժությունն է, որն ունի իր հետաքրքրություններն ու մեծ հնարավորություններն իրավական ոլորտում, դեռևս քիչ է օգտագործվում ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու համար:

Արդի հասարակությունում կտրուկ մեծացել և շարունակում է մեծանալ օրինականության և իրավակարգի ամրապնդման մանկավարժական հիմնախնդիրների լուծման նշանակությունը իրավաբանական մանկավարժության՝ իբրև կիրառական գիտության հնարավորությունների օգտագործմամբ: Իրավական պետության էության, նրա մարդասիրական և ժողովրդավարական նշանակության ժամանակակից ընկալումների համաձայն՝ իրավապահ մարմինների և աշխատակիցների գործունեությունը պետք է կատարելագործվի: Դա, մասնավորապես, ենթադրում է աշխատանքի մանկավարժականացում, այսինքն՝ աշխատանքի հարստացում մանկավարժական մոտեցումներով, եղանակներով և միջոցներով, իրավաբանական մանկավարժության տվյալների և հանձնարարականների լիարժեք օգտագործմամբ այն պահին և այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է և որտեղ կարող է տալ լավագույն գործնական արդյունքներ: Հասարակական կյանքի մարդասիրացման և ժողովրդավարացման ճիշտ ընկալվող միտումներն անթույլատրելի են դարձնում ուժային միջոցների օգտագործումն

իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից: Դրանք նաև պարտավորեցնում են գործել առավել պրոֆեսիոնալ, օգտագործել արդյունավետ և քաղաքակիրթ միջոցներ, որոնց շարքին են դասվում նաև մանկավարժական մեթոդները, ներառել մանկավարժական մոտեցումները աշխատանքի մեջ և իրավաբանական ուսումնասիրման առարկա դարձած կյանքի իրադարձությունների քննարկումների ժամանակ: Դա մեծացնում է իրավաբանների պրոֆեսիոնալիզմի նկատմամբ պահանջները՝ ներառյալ իրավաբանական մանկավարժության իմացությունը:

Ժամանակը թելադրում է իրավական ոլորտում մանկավարժության հնարավորությունների օգտագործման բարելավման անհրաժեշտություն: Անհրաժեշտ է առանձին ուսումնասիրությունների ամբողջականացման գիտակցում, իրականության օրինաչափությունների ուսումնասիրման առանձնահատկությունների հայտնաբերում, համարժեք հարացույցի, մեթոդաբանության, տեսության մշակում, ինչը կարող է բարձրացնել նաև մանկավարժական մշակումների մակարդակը:

Հայաստանի Հանրապետությունում մարդասիրական, ժողովրդավարական, քաղաքացիական, իրավական հասարակության ստեղծման այս պատմական փուլում, երբ սոցիալական արդարությունը, յուրաքանչյուր մարդու կյանքը, իրավունքը, անձի արժանապատվությունը պետք է դառնան բարձրագույն արժեքներ, իրավաբանական մանկավարժության սոցիալական պատասխանատվությունը կտրուկ աճել է. վերջինիս համար բացվել են զարգացման նոր հնարավորություններ և գիտական որոնումների լայն ասպարեզ՝ յուրաքանչյուր քաղաքացու անվտանգ և ազատ կյանքի ապահովման նպատակով:

Հետազոտության նպատակն է մշակել իրավաբանական և մանկավարժական գիտությունների հանգույցում ձևավորված իրավաբանական մանկավարժության գիտության հայեցակարգային հիմքերը:

Հետազոտության խնդիրներն են.

1. ուսումնասիրել փիլիսոփայական, մարդաբանական, իրավաբանական, հոգեբանական, արժեքանական և մանկավարժական գիտական աղբյուրները, առանձնացնել և բացահայտել այն նախադրյալները, որոնք հայեցակարգային հիմք են հանդիսանում մանկավարժության նոր գիտաճյուղի՝ իրավաբանական մանկավարժության ծագման և կայացման գործընթացում, որոշել նրա նպատակը, խնդիրները և զարգացման հնարավորությունները ՀՀ-ում.

2. իրականացնել տեսական հետազոտություն իրավունքի և իրավակարգի պահպանության վերաբերյալ և այն գնահատել հայեցակարգային մոտեցման դիրքերից՝ այդ հիմնախնդիրների մանկավարժական առանձնահատկություններին համապատասխան.

3. հետազոտել, բացահայտել և հիմնավորել իրավաբանական մանկավարժություն գիտության առարկան, նրա ֆենոմենոլոգիան և օրինաչափությունները.

4. առանձնացնել իրավաբանական մանկավարժության հիմնական հասկացությունները, տալ դրանց բնորոշումը և փոխկապակցվածությունը.

5. մշակել իրավաբանական մանկավարժության՝ որպես գիտության հետազոտության մեթոդաբանության հիմունքները.

6. հիմնավորել իրավաբանական մանկավարժության համար հատուկ սկզբունքների անհրաժեշտությունը, որոնք բացահայտում են նրա տրամաբանական-կառուցվածքային առանձնահատկությունը և մարդասիրական էությունը.

7. տեսականորեն հիմնավորել իրավական դաստիարակության, իրավական մշակույթի և իրավագիտակցության դերը մասնագիտական իրավաբանական գործունեության սուբյեկտների աշխատանքում.

8. հիմնավորել ՀՀ իրավապահ մարմինների գործունեությունը մանկավարժական բաղադրիչով ապահովելու անհրաժեշտությունը.

9. բացահայտել ՀՀ իրավապահ մարմինների գործունեության և մանկավարժական հիմնախնդիրների փոխադարձ կապը, մշակել այդ մարմինների աշխատակիցների մասնագիտական-մանկավարժական պատրաստվածությանը ներկայացվող պահանջները.

10. բացահայտել և բնութագրել բուհերի իրավաբանական մասնագիտության բաժիններում իրականացվող կրթական գործընթացների մանկավարժական համակարգերի հիմնական տարրերը՝ նպատակը, խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, պայմանները և այլն:

Հետազոտության գիտական նորույթը

• Մշակվել են իրավաբանական մանկավարժության փիլիսոփայական, մարդաբանական, իրավաբանական, հոգեբանական, արժեքանական և մանկավարժական հիմքերը:

• Գիտականորեն հիմնավորվել են իրավաբանական մանկավարժության ձևավորման նախադրյալներն ու գործոնները, մշակվել տեսական և մեթոդաբանական հիմքերը:

• Սահմանվել են իրավաբանական մանկավարժության հիմնական հասկացությունները, բացահայտվել՝ գործառույթների բովանդակությունը, հիմնավորվել՝ սկզբունքները:

• Բացահայտվել են հասարակության իրավական ոլորտի և մանկավարժության միջև առկա որոշակի օրինաչափ կապերը:

• Տրվել են ՀՀ-ում բարձրագույն իրավաբանական կրթության մանկավարժական մոտեցումները, գործընթացի նպատակները, խնդիրները, բովանդակությունը, ձևերը և մեթոդները:

• Համակարգվել և ձևակերպվել են արդի իրավաբանական կրթության ոլորտում դասավանդողների անձնային և մասնագիտական կոմպետենցիաները կրթության որակի ապահովման համատեքստում:

• Բացահայտվել են ժամանակակից պայմաններում բարձրագույն իրավաբանական կրթության զարգացման հիմնական միտումները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Իրավաբանական մանկավարժության՝ որպես գիտության զարգացումը նպաստում է ՀՀ-ում իրավական ոլորտի կատարելագործմանը, օրինականու-

թյան և իրավունքի ամրապնդմանը, հասարակական կյանքի մարդասիրացմանը և ժողովրդավարացմանը:

2. Ժամանակակից իրավաբանական մանկավարժության՝ որպես մանկավարժական գիտելիքի նոր բնագավառի տեսական հիմքերի մշակումը, նրա օբյեկտի, առարկայի, նպատակի, խնդիրների, համակարգի, մեթոդաբանական սկզբունքների, հայեցակարգային դրույթների, հիմնական հասկացությունների բնութագրումը նախադրյալներ են ստեղծում այդ գիտության հետագա զարգացման համար:

3. Իրավաբանական մանկավարժության բնորոշումը՝ որպես մանկավարժության ինքնուրույն գիտաճյուղ, գիտելիքների միջգիտական բնագավառ, հնարավորություն է ստեղծում իրավունքի հետազոտման և, առավել ևս, կատարելագործման մեջ մանկավարժական հայեցակետի անհրաժեշտությունը տեսնել իրավունքի տեսության հիմնարար դրույթների կիզակետում:

4. Իրավաբանական մանկավարժության՝ իբրև կիրառական գիտության հնարավորությունների բացահայտումը մեծացնում է օրինականության և իրավակարգի ամրապնդման մանկավարժական հիմնախնդիրների լուծման նշանակությունը, իրավապահ մարմինների և աշխատակիցների գործունեության հիմնովին կատարելագործման անհրաժեշտությունը:

5. Իրավաբանական մանկավարժության հայեցակարգային հիմքերի (փիլիսոփայական, մարդաբանական, իրավաբանական, հոգեբանական, արժեքանական, մանկավարժական) վերլուծությունը և հիմնավորումը՝ գիտելիքների այդպիսի ամբողջականության տեսքով, ապահովում է իրավաբանական մանկավարժության բնութագրումը որպես ամբողջական միջգիտական բնագավառի, որը թեև գտնվում է իրավաբանական և մանկավարժական գիտելիքի հատման սահմանում, բայց գլխավոր հատկանիշներով համարվում է ոչ թե իրավագիտության, այլ մանկավարժության գիտաճյուղ:

6. Իրավապահ մարմինների անձնակազմերի բարոյահոգեբանական պատրաստվածության մանկավարժական համակարգի մշակումն ապահովում է այդ մարմինների լիարժեք գործունեությունը, հիմնավորում գործընթացի մանկավարժականացման անհրաժեշտությունն ու էությունը և նրանց մասնագիտական-մանկավարժական պատրաստմանը ներկայացվող պահանջները:

7. Բարձրագույն իրավաբանական մասնագիտական կրթության մեջ ժամանակի պահանջներին հարիր մասնագետներ պատրաստելու և նրանց ուսուցման ընթացքում նոր մոտեցումների բացահայտման նպատակով իրականացվող տեսական ու գործնական հիմքերի վերլուծությունն առաջացնում է մասնագետ-իրավաբանների պատրաստման եղանակների փոփոխություն, նոր և նորարարական մոտեցումների անհրաժեշտություն, ուսուցման ընթացքում նոր տեխնոլոգիաների կիրառում:

8. Հայ իրականության մեջ կրթության զարգացման գործընթացների ուսումնասիրություններն արդիական են դարձնում բարձրագույն իրավաբանական կրթության որակի ու արդյունավետության բարձրացման խնդիրների արդյու-

նավետ լուծումները և նոր պահանջներ են առաջադրում պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժամասնագիտական իմացությանը և ունակությունների խորացմանն ու զարգացմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը

- Իրավաբանական մանկավարժության հիմնախնդիրները մասնակիորեն դիտարկվել են և՛ իրավագիտության, և՛ մանկավարժության մեջ, սակայն սույն հետազոտությունում մշակվել են նրա փիլիսոփայական, մարդաբանական, իրավաբանական, հոգեբանական, արժեքանական և մանկավարժական հիմքերը, որը տվյալ խնդրի ուսումնասիրումը դարձրել է ավելի ընդգրկուն և ամբողջական:

- Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմունքների մշակմամբ ճանաչվում է մանկավարժության նոր գիտաճյուղը՝ իրավաբանական մանկավարժությունը:

- Սույն հետազոտությունը, լինելով համակարգված տեսական մշակում, զգալի ավանդ է ներդնում մանկավարժական գիտության մեջ՝ համալրելով այն իրավաբանական-մանկավարժական նոր գիտելիքներով, որոնք խիստ անհրաժեշտ են քաղաքացիական հասարակության ձևավորման և իրավական պետության կառուցման գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը

- Հետազոտությունը միտված է գործնականում լուծելու խնդիրներ, որոնք ծառայած են ՀՀ մասնագիտական կրթության համակարգի առջև: Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները և առաջարկությունները կարող են նպաստել ՀՀ բարձրագույն իրավաբանական կրթության համակարգի կատարելագործմանը:

- Հետազոտության տեսական դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել ինչպես մանկավարժության տեսության և պատմության ուսումնական ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ կազմելիս, այնպես էլ իրավաբանական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացում:

- Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել «Իրավաբանական մանկավարժություն» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, վեց գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը, ներառյալ գրականության ցանկը, կազմում է համակարգչային 311 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիակա-նությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, գիտա-կան նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Իրավաբանական մանկավարժության փիլիսոփայական հիմքերը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Փիլիսոփայության դերը ժամանակակից աշխարհում» ենթագլխում արծարծվում է այն գաղափարը, որ գիտական իմացության աճող տարբերակվածության պայմաններում փիլիսոփայությունն ամենագործուն մասնակցությունն է ունենում միասնացման գործընթացում՝ աշխարհի միասնական պատկերի մեջ առանձին գիտությունների նվաճումների համադրությամբ:

Նշվում է, որ փիլիսոփայությունը հոգևոր գործունեության ձև է՝ նպատակաուղղված աշխարհայացքային արմատական հարցերի դրվածքին, վերլուծությանն ու որոշմանը՝ կապված աշխարհի և մարդու նկատմամբ ամբողջական հայացքի մշակման հետ: Դրան են վերագրվում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մարդու յուրահատկության և համընդհանուր կեցության մեջ նրա զբաղեցրած տեղի ըմբռնումը, մարդկային գործունեության իմաստն ու նշանակությունը, կեցության և գիտակցության, սուբյեկտի և օբյեկտի, ազատության, պայմանականության ու ճանաչելիության և բազում այլ երևույթների փոխհարաբերությունը:

Փիլիսոփայությունը հանդես է գալիս երկու ձևով՝ 1) որպես ամբողջ աշխարհի և մարդու՝ այդ աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքի իրազեկություն և 2) որպես իմացության սկզբունքների համալիր, իմացական-ճանաչողական գործունեության համընդհանուր մեթոդ: Սրանով է հիմնավորված փիլիսոփայության բազմաթիվ գործառույթները երկու խմբով՝ ներկայացնելը՝ աշխարհայացքային և մեթոդաբանական:

Երկրորդ՝ «**Մանկավարժության փիլիսոփայական հիմքերը**» ենթագլուխը նվիրված է մանկավարժության և փիլիսոփայության կապերին: Նշվում է, որ մանկավարժությունն անձի զարգացման և դաստիարակության հիմնահարցերը լուծելիս զարգացման փիլիսոփայական տեսության, հասարակական կյանքում տնտեսական գործոնի դերի, դաստիարակության պատմականության, նրա հասարակական նպատակի իմացության ընդհանուր օրինաչափությունների փիլիսոփայական ըմբռնման կարիք ունի:

Ներկայում առավել ընդունելի է փիլիսոփայությունը որպես մանկավարժության մեթոդաբանական գործոն համարելը, որն օրինաչափ է և պայմանավորվում է փիլիսոփայական գիտելիքների բնույթով, աշխարհայացքային էությամբ և աշխարհում մարդու տեղի իմաստավորման լուծելի խնդիրներով:

Երրորդ՝ «**Մանկավարժությունը և կրթության փիլիսոփայությունը**» ենթագլխում խոսվում է այն մասին, որ սոցիալական, քաղաքական, գիտական համընդհանուր փոփոխություններով բնորոշվող 21-րդ դարը նորի փնտրտուքի մեջ է նաև կրթության ոլորտում. այդ են պահանջում տեղեկատվական հասարակության զարգացման արդի միտումները: Սակայն կրթության ոլորտի արդիականացումը դժվարությունների է հանդիպում և հաճախ ետ է մնում գիտության, տնտեսության, մշակույթի զարգացման, սոցիալական հարաբերությունների և հասարակական գիտակցության փոփոխությունների մակարդակներից:

Սոցիալական փիլիսոփայությունը, ինչպես նաև նրանում առկա կրթության փիլիսոփայության խնդիրները կրթության զարգացման հարցերը դարձրել են արդի գիտական հետազոտությունների գլխավոր առարկան:

Մեր կարծիքով՝ փիլիսոփայությունն ունի կրթության համար հատուկ արժեք ներկայացնող ներուժ՝ պայմանավորված նրա մշտապես խնդրահարույց հարցողական բնույթով, բազմափոփոխակ պատասխանների թույլտվությամբ, իմացության գործիքակազմի նկատմամբ անդրադարձ հարաբերությամբ, տրամաբանականության և հետևողականության պահանջով:

Չորրորդ՝ **«Իրավաբանական մանկավարժությունը՝ որպես հասարակական գիտություն»** ենթագլխում քննվում է իրավաբանական մանկավարժությունը՝ որպես գիտական մանկավարժական գիտելիքի հատուկ բնագավառ:

Իրավաբանական մանկավարժության ճանաչողության օբյեկտն ընդհանուր է իրավագիտության ճանաչողության օբյեկտի հետ՝ հասարակության իրավական ոլորտը, օրինականությունը և իրավակարգը, իրավապահ կառույցների, մարմինների և աշխատակիցների գործունեությունը: Ընդհանուր է նաև նրանց գլխավոր նպատակը՝ իրավական հասարակության ստեղծում, օրինականության ու իրավակարգի ամրապնդում: Սակայն էականորեն տարբեր է իրավաբանական մանկավարժության և իրավաբանության ճանաչողության առարկան:

Օրինականության և իրավակարգի հիմնախնդիրների մանկավարժական հետազոտությունների ամբողջ փորձի վերլուծության հիման վրա դիտարկվում են իրավաբանական-մանկավարժական հիմնական խնդիրները: Իրավաբանական մանկավարժության առարկայի հիմնական խնդիրները բնութագրում են նրա կառուցվածքը, հետազոտության հիմնական ուղղությունները, մասնավոր տեսությունները և գործնական հանձնարարությունները:

Տրվում է իրավաբանական մանկավարժության կատեգորիաների հետևյալ դասակարգումը՝

1. համակարգային կատեգորիաներ,
2. իրավապահպան գործունեության ապահովման իրավաբանա-մանկավարժական համակարգի կատեգորիաներ,
3. մանկավարժական մասնավոր կատեգորիաներ:

Սույն ենթագլխում խոսվում է այն մասին, որ իրավաբանական մանկավարժության մեթոդաբանության բուն էությունն արտահայտվում է մանկավարժական գիտության ընդհանուր մեթոդաբանական սկզբունքներում, հետազոտության հիմնական ելակետային դրույթներում և մանկավարժական իրականության երևույթների գնահատման մեջ:

Դրանցից կարևորներն են.

1. օբյեկտիվության սկզբունքը,
2. դետերմինիզմի սկզբունքը (պատճառայնություն, դիպվածականություն),
3. փոխկապակցման և փոխգործունեության սկզբունքը,
4. համակարգվածության սկզբունքը,

5. զարգացման սկզբունքը:

Իրավաբանական մանկավարժության մասնավոր մեթոդաբանությունը համապատասխանում է այն օբյեկտիվ անհրաժեշտությանը, որը պետք է հաշվի առնի հետազոտվող մանկավարժական փաստերի, օրինաչափությունների և մեխանիզմների որակական յուրահատկությունները, որոնք բնորոշ են իրավաբանական մանկավարժության հետազոտության առարկային:

Հիմնական և յուրահատուկ իրավաբանա-մանկավարժական օրինաչափությունները և դրանց ամբողջությունն իրենց արտացոլումն են գտնում իրավաբանական մանկավարժության հատուկ գիտական սկզբունքներում.

1. Մանկավարժական առարկայականության սկզբունք:

2. Իրավաբանա-մանկավարժական յուրահատկության սկզբունք:

3. Դաստիարակության, կրթության, ուսուցման, զարգացման, գործունեության, կենսաձևի և իրավաբանորեն զգալի վարքագծի, մարդու գործողությունների միասնականության սկզբունք:

4. Իրավաբանա-մանկավարժական հիմնախնդիրների և դրանց լուծման մեջ առանձնահատուկի և ոչ առանձնահատուկի, էականի և միջնորդավորվածի միասնության սկզբունք:

5. Արդիականության սկզբունք:

6. Մարդասիրության, ժողովրդավարության և օրինականության սկզբունք:

7. Կառուցողականության սկզբունք:

Ատենախոսության երկրորդ՝ «Իրավաբանական մանկավարժության մարդաբանական հիմքերը» գլուխը բաղկացած է հինգ ենթազխից:

Առաջին՝ «Մարդու հիմնախնդիրը մանկավարժական մարդաբանությունում» ենթազխում ներկայացվում է, որ Հայաստանում ընդհանուր զարգացման մարդասիրական միտումները հետաքրքրություն են առաջ բերում մանկավարժական մարդաբանության՝ որպես համակողմանի գիտելիքների հիման վրա մարդու դաստիարակությանը վերաբերող գիտության նկատմամբ: Դրա հետ կապված՝ ծագում են հարցեր, մասնավորապես՝ մանկավարժական մարդաբանությունն ընդհանուր առմամբ մարդուն հասկանալու ի՞նչ գիտական ներուժ ունի, ի՞նչ մանկավարժական խնդիրներ են ծառայում նրա առջև, ինչպե՞ս պետք է համաձայնեցնել տարբեր գիտությունների հայեցակետերը մարդու հիմնախնդրի վերաբերյալ:

Մանկավարժական մարդաբանության առարկա են դիտվում ձևավորվող ու զարգացող մարդը և «մարդ» երևույթը կրթության համատեքստում:

Երկրորդ՝ «Դաստիարակությունը որպես մարդաբանական գործընթաց» ենթազխում հիմնավորվում է, որ ժամանակակից մանկավարժական մարդաբանությունը դաստիարակությունն ընդունում է որպես մի գործընթաց, որը պահպանում է մարդկային հասարակության ինքնությունը և պայմաններ է ստեղծում հասարակության զարգացման, ինչպես նաև մարդ արարածի արդյունավետ գոյության համար: Ահա թե ինչու է այն օբյեկտիվորեն համարվում մեծագույն արժեք, որն արդիական է մարդկության թե՛ ներկայի և թե՛ ապագայի, ցան-

կացած սոցիումի և յուրաքանչյուր մարդու համար:

Ժամանակակից մանկավարժական մարդաբանությունը դաստիարակությունն ընկալում է որպես գործընթաց, որը պահպանում է հասարակության մարդասիրական բնույթը, պայմաններ է ստեղծում սոցիումի և անձի զարգացման համար: Մարդաբանական մոտեցման տեսանկյունից դաստիարակությունը դիտարկվում է որպես մարդկային կեցության հատուկ մեթոդ և առանձնահատուկ գործունեություն, որն ունի չափազանց բարձր արժեք:

Երրորդ՝ **«Կրթության փիլիսոփայությունը և ժամանակակից մանկավարժական մարդաբանությունը»** ենթագլխում փաստարկվում է, որ կրթության փիլիսոփայությունն ընդհանուր մանկավարժական հիմնախնդիրները հետազոտում է մարդու հիմնախնդիրների փիլիսոփայական իմաստավորման համատեքստում:

Կրթության փիլիսոփայության մեջ առանձնացվում են երկու հիմնական ուղղություններ՝ պատմափիլիսոփայական, որում վերլուծության է ենթարկվում կրթության վրա անվանի փիլիսոփաների գաղափարների ունեցած ազդեցությունը, և գործառույթային-տիպաբանական, որի շրջանակներում քննվում է տարբեր մանկավարժական դպրոցների և ուղղությունների փիլիսոփայական-մեթոդաբանական հայեցակարգը:

Չորրորդ՝ **«Մարդու իրավունքների փիլիսոփայական իմաստը»** ենթագլխում դիտարկվում է մարդու իրավունքների նշանակությունը որպես ժամանակակից իրավակարգի օրինականացման կարևոր սկզբունք, որը պահանջում է այդ իրավունքների ավելի խոր ուսումնասիրություն, այսինքն՝ անցում անմիջապես խնդրին՝ մարդու իրավունքների, գաղափարների փիլիսոփայական-մարդաբանական հիմնավորմանը և այդ իրավունքների ակունքների բացահայտմանը:

Եզրահանգում է կատարվում, որ մարդու ձգտումներից առավել հիմնարարը սեփական ես-ի, սեփական էքզիստենցիայի, սեփական նույնականության պահպանումն է, և այս ձգտումը մարդաբանական ամենակարևոր շահն է: Այս շահի իրականացման նվազագույն պայման է բռնությունից իրաժարվելու պահանջը, որի կատարումը մարդուն մարդ է դարձնում. դա այլ մարդու իրավունքների, նրա արժեքների և արժանապատվության ճանաչման պահանջն է:

Հինգերորդ՝ **«Իրավունքի մարդասիրական բնույթը»** ենթագլխում նշվում է, որ իրավաբանական մարդաբանության համատեքստում իրավունքի փիլիսոփայության հիմնական հարցը համարվում է ընդհանուր փիլիսոփայական «ով է մարդը» հարցի կոնկրետացումը և հանդես է գալիս նաև որպես հարց այն մասին, թե «ով է իրավաբանական մարդը»:

Մարդն իրավունքի համակարգում, այսինքն՝ իրավաբանական մարդը, նախևառաջ սուբյեկտ է, որոշակի գործողությունների կատարողը և դրա կրողը, ուստի իրավաբանական մարդաբանության կարևորագույն հարց է համարվում «ո՞վ է իրավունքի սուբյեկտը» կամ «ի՞նչ է նշանակում լինել իրավունքի սուբյեկտ և ոչ ուղղակի բարոյական պարտավորվածության սուբյեկտ կամ

քաղաքացի»:

Լինել իրավական սուբյեկտ դեռ չի նշանակում լինել իրական իրավագիտակցության կրող: Իրավական սուբյեկտի գաղափարում դրված է գիտակցված վարքագիծը: Գիտակցված գոյության գործնական և կենսական սահմանները արտահայտված են գործունակության գաղափարի մեջ:

Ատենախոսության երրորդ՝ «Իրավաբանական մանկավարժության իրավաբանական հիմքերը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Իրավական պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերակցությունը» ենթագլխում ամրագրվում է, որ Հայաստանի արդի սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման պայմաններում առանձնահատուկ հրատապություն է ձեռք բերում անձնային, հասարակական և պետական հետաքրքրությունների հավասարակշռության ապահովման ու համաձայնեցման հիմնախնդիրը, որի լուծումը կախված է պետության և հասարակության փոխուղղված կապերի զարգացման մակարդակից: Գործունակ հասարակության ձևավորումը համարվում է հայոց պետականության կարևորագույն ռազմավարական խնդիրներից մեկը, ըստ որի՝ առանց ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության զարգացման, առանց քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները ապահովելու, առանց իր իսկ՝ պետական իշխանության արդյունավետ կազմակերպման անհնար է լուծել պետության առջև կանգնած հրատապ խնդիրներից որևէ մեկը:

Քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը քաղաքագիտական և իրավաբանական երկու հիմնական հասկացություններ են: Այդ հասկացությունների տեսական իմաստավորման ամբողջ բարդությունն «իրավունք», «պետություն», «հասարակություն» հասկացությունների միասնության մեջ է: Այս փոխկապակցված երևույթների բարդ բնույթն ամփոփված է հետևյալ ձևակերպման մեջ. առանց քաղաքացիական հասարակության՝ չկա իրավական պետություն, առանց իրավական պետության՝ հնարավոր չէ լիարժեք քաղաքացիական հասարակության ձևավորում: Իրավական պետությունը ոչ միայն դիմադարձ չի կանգնում քաղաքացիական հասարակությանը, այլև ստեղծում է պայմաններ նրա բնականոն գործառնության և կատարելագործման համար, քանի որ վերջինս օբյեկտիվորեն ինտեգրում է բնակչության բոլոր սոցիալական շերտերի ու խմբերի շահերը և արժեքները: Նմանատիպ ինտեգրման մեջ բովանդակվում են ծագող հակասությունները քաղաքակիրթ իրավական ճանապարհով լուծելու, սոցիալական կտրուկ հեղաբեկումները բացառելու, հասարակության զարգացման բնականոն զարգացումն ապահովելու երաշխիքները:

Երկրորդ՝ «Իրավական պետությունում իրավակարգի և օրինականության ամրապնդման մանկավարժահոգեբանական գործոնները» ենթագլխում շեշտվում է, որ 20-րդ դարը պատմական ասպարեզից ընդմիջտ հեռացավ՝ երևան բերելով սոցիալական կյանքի դինամիկայի աճ, ցնցելով մեր երևակայությունը քաղաքականության, տնտեսության կառուցվածքներում և

մշակույթի մեջ կատարված խորագույն փոփոխություններով և, որպես այդ ամենի հետևանք, թողնելով մեզ կատարյալ լինելուց հեռու մի հասարակություն, որում ապրում ենք: Եվ այս խնդրահարույց իրավիճակում էլ կատարվում է մարդու՝ հասարակության մեջ իր տեղի և դերի, իր արարքների համար պատասխանատվության գիտակցումը, ինչպես նաև իր գործունեության ուղղությունների և ձևերի ընտրությունը: Իրավագիտակցության և իրավական մշակույթի կայացման ու ձևավորման մեջ ամենևին ոչ վերջին դերն են խաղում իրավակարգը և օրինականությունը՝ այն գլխավոր գործոնները, որոնք վկայում են հասարակության իրավական համակարգի մասին:

Երկա ժամանակներում օրինականությունը՝ որպես հասարակության զարգացման կարևորագույն պայման և միջոց, ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն՝ կապված ազգային-պետական կարգի, ապրանքա-շուկայական հարաբերությունների ձևավորման, համաշխարհային իրավունքի համակարգ ինտեգրման, հասարակության ժողովրդավարացման, մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովման խնդիրների լուծման հետ:

Իրավական պետության ստեղծումն ու կերտումը պետք է իրականանան քաղաքացիական հասարակության հենքի վրա, հասարակության մեջ ապահովի իրավունքի գերակայությունը, օրինականությունն ու իրավակարգը, մարդու իրավունքների ու ազատությունների առավելագույն պաշտպանությունը, որի պայմաններում միայն մարդիկ կկարողանան ստեղծագործաբար աշխատել ու արժանավայել ապրել:

Օրինականության և իրավակարգի ամրապնդումը, հանցագործությունների դեմ պայքարն ամբողջ հասարակության խնդիրն է: Իրավունքի վրա հիմնված իրավական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծումը համալիր գիտական և գործնական հիմնախնդիր է: Օրինականությունը և իրավակարգն անքակտելիորեն կապված են հասարակության մանկավարժական համակարգի, նրանում իրավապաշտ վարքի նշանակությունը հասկացող կամ ժխտող և համապատասխան ձևով նրա նորմերին վերաբերվող քաղաքացիների զանգվածային և անհատական վարքի վրա ներազդող դաստիարակության, կրթության, ուսուցման և զարգացման ինստիտուտների գործելու հաջողության և արդյունավետության հետ:

Օրինականության և իրավակարգի դիտարկումը ակնհայտ է դարձնում դրանց սերտ կապն ու կախվածությունը հոգեբանական գործոններից:

Մեծանում է նաև հոգեբանական գործոնների դերն ու ազդեցությունը իրավակարգի վիճակի վրա, երբ դա վերաբերում է բոլոր քաղաքացիների և նրանցից յուրաքանչյուրի կյանքի իրավական իսկությանը, հանցագործության իրավիճակին, մակարդակի և դրա դեմ մղվող պայքարի հաջողությանը: Այդ հարցում մարդկանց և խմբերի հոգեբանությունը վճռորոշ նշանակություն է ունենում:

Իրավական պետության, նրա մարդասիրական և ժողովրդավարական նախանշանակվածությամբ իրավական մարմինների աշխատանքը պետք է արմա-

տապես վերանայվի: Դա անհնարին կլինի առանց իրավապահ մարմինների բոլոր աշխատակիցների հոգեբանական վերակառուցման:

Երրորդ՝ «**Իրավական մշակույթը՝ որպես քաղաքացիական հասարակության ձևավորման պայման**» ենթաալիում նշվում է, որ քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը պատմականորեն և ծագումնաբանորեն մեկմեկու կապված, ժողովրդավարական ինքնակազմակերպման ունակ ժամանակակից քաղաքակիրթ մարդկային հանրույթի իրողություններ են: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, քաղաքացիական հասարակության և իրավական պետության ձևավորումը գործնականում կատարվում է զուգահեռաբար: Քաղաքացիական հասարակությունն իր գոյության և զարգացման ընթացքում միշտ կախված է եղել ժողովրդավարական պետության առկայությունից և ժողովրդավարական իրավական համակարգի զարգացումից: Իրավական պետության գործառնության համար անհրաժեշտ է իրավական մշակույթի և հասարակական հարաբերությունների բարձր մակարդակ, որոնց մարմնավորման իրական արդյունքը քաղաքացիական հասարակությունն է: Այդ պատճառով կարելի է ասել, որ իրավական պետության կայացումը, քաղաքացիական հասարակության զարգացումը և իրավական մշակույթի ձևավորումը փոխադարձաբար՝ մեկը մյուսին պայմանավորող գործընթացներ են:

Անկարելի է քաղաքացիական հասարակություն կառուցել կամ ձևավորել արհեստականորեն. այն պետք է առաջանա «ներքևի» նախաձեռնության արդյունքում և ինքնակամորեն, պետք է ձևավորվի և զարգանա ինքնուրույնաբար: Ահա թե ինչու քաղաքացիական հասարակության ձևավորման կարևորագույն պայմաններից մեկը անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է և ինքնազարգացումը, անձ, որն ազատորեն ընտրում է իր կենսական ուղին և պատասխանատու է դրա համար, ունի սեփական արժանապատվության գիտակցում և զգացում, զարգացած իրավական մշակույթ: Բայց իրավական մշակույթը, ընդհակառակը, կարելի է և պետք է ձևավորել իրավական լուսավորության, իրավական դաստիարակության, քաղաքացիա-իրավական կրթության միջոցով: Անկախ մտածող և ներքնապես ազատ մարդ կարելի է դաստիարակել միայն այն դեպքում, եթե ջանքերն ուղղվեն այն համոզմունքի ձևավորմանը, թե անձը, նրա իրավունքներն ու ազատությունները հանդիսանում են բարձրագույն արժեքներ: Հանցագործությունների աճը, սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակը պահանջում են ակտիվացնել աշխատանքներն անձի իրավունքների լուսաբանության ասպարեզում:

Այսպիսով՝ Հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցման ձևավորման հեռանկարները գործնականում նշանակալից չափով կախված են իրավական մշակույթի ձևավորման հեռանկարից, իսկ այդ գործընթացում կապը երկկողմանի է: Որպեսզի անձը դառնա քաղաքացի, նրա սոսկ իրավական տեղեկացվածությունը բավարար չէ. անհրաժեշտ է իրավունքի վերաբերյալ նրա գիտելիքները դարձնել ամենօրյա կիրառական նորմեր: Իսկ պատմականորեն ստեղծված ավանդույթների, մարդու իրավունքների և ազատություն-

ների թերագնահատմամբ առաջնորդվելը չի նպաստում մարդկանց կողմից բարձրագույն իրավական արժեքների գիտակցմանը և անձի ու հասարակության իրավական մշակույթի մակարդակի բարձրացմանը, քաղաքացիական հասարակության ինքնակազմակերպմանը:

Չորրորդ՝ «Իրավաբանական կրթությունը՝ որպես հասարակության իրավական մշակույթի տարր» ենթագլխում նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում հասարակության կյանքի տարբեր ոլորտներում՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, կատարվում են արմատական վերափոխումներ, որոնք ուղեկցվում են իրավական համակարգի լայնածավալ բարեփոխումներով, այդ թվում՝ նաև օրենսդրությունում, իրավաստեղծ և իրավապահ մարմիններում, իրավունքի կիրառման և ապահովման մեխանիզմներում ու միջոցներում: Իրավունքի ոլորտում վերափոխումների արդյունավետությունը, դրանց համապատասխանությունն այն խնդիրներին, որոնք կանգնած են հայ հասարակության և հայոց պետության առջև, անմիջականորեն կախված են ժամանակակից հայ հասարակության իրավական մշակույթի մակարդակից, որում միշտ էական նշանակություն է ունեցել և այժմ էլ ունի իրավաբանների իրավական մշակույթը, նրանց մասնագիտական իրավագիտակցության վիճակը և հնարավորությունները: Իրավունքը հասարակական կյանքի այնպիսի երևույթ է, որ ձևավորվում և գործառնում է մարդկանց գիտակցության ու կամքի շնորհիվ: Այդ պատճառով ցանկացած իրավական համակարգի զարգացածության մակարդակը շատ բանով կանխորոշվում է մարդկանց իրավագիտակցությամբ: Ժամանակակից քաղաքակիրթ հասարակության մեջ մասնագիտական իրավագիտակցության գլխավոր, հիմնական և հիմնարար աղբյուրը բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթությունն է: Մասնագիտական իրավաբանական կրթությունը հանդիսանում է, մի կողմից, հասարակության իրավական մշակույթի մաս, որը կատարում է հատուկ գործառույթներ: Այն իր մեջ կուտակում է հասարակության իրավական մշակույթի խտացումները և փոխանցում պրոֆեսիոնալ իրավաբանների մի սերնդից մյուսին: Այս տեսանկյունից իրավաբանական կրթությունը հանդես է գալիս իբրև մասնագիտական իրավական մշակույթի վերարտադրման ձև և ենթարկվում է հասարակության իրավական համակարգի զարգացման ու գործառնության օրինաչափություններին: Մյուս կողմից՝ բարձրագույն իրավաբանական կրթությունը համարվում է բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի մի մաս: Այն ունի իր բովանդակային տարրերը՝ չափորոշիչների, կրթական ծրագրերի և այլ փաստաթղթերի տեսքով, իրացվում է մասնագիտացված սոցիալական ինստիտուտների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների զանազան ձևերում: Այս տեսանկյունից իրավաբանական կրթությունը ենթարկվում է կրթության համակարգի գործառնման ու զարգացման օրինաչափություններին:

Ատենախոսության չորրորդ՝ «Իրավաբանական մանկավարժության հոգեբանական հիմքերը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական

ձևախեղումը որպես հոգեբանական երևույթ» ենթագլխում փաստարկվում է, որ իրավապահայան գործունեության դերի բարձրացումն օբյեկտիվորեն պայմանավորված է հայ հասարակության զարգացման վիճակով և միտումներով, նրա առջև դրված սուր և ճակատագրական քաղաքական, հանրային և տնտեսական խնդիրներով: Բուն իմաստով իրավական պետության, նրա մարդասիրական և ժողովրդավարական նախանշանակվածությամբ իրավական մարմինների աշխատանքը պետք է արմատապես վերանայվի: Դա անհնարին կլինի առանց իրավապահ մարմինների բոլոր աշխատակիցների հոգեբանական վերակառուցման, առանց նրանց՝ աշխատանքի սկզբունքորեն նոր եղանակների և միջոցների տիրապետման:

Հասարակության կյանքի ճիշտ ընկալվող մարդասիրացման և ժողովրդավարացման միտումները, մարդկային քաղաքակրթության արդի մակարդակն անխուսափելի անհրաժեշտությամբ պարտադրում են իրավապահ մարմինների աշխատակիցների ուժային միջոցների կիրառման անթույլատրելիությունը: Նրանք պարտավորվում են կիրառել ավելի քաղաքակիրթ, հոգեբանական իրավաչափ միջոցներ, կատարել հոգեբանորեն հիմնավորված քայլեր օրինականության և իրավակարգի ամրապնդման, իրավաբանական դիտարկման ենթակա կենսական նշանակության հարցեր լուծելիս:

Երկրորդ՝ **«Իրավաչափ վարքագծի իրավաբանական-հոգեբանական բնորոշումը»** ենթագլխում ընդգծվում է, որ մարդու արարքները դիտարկելով իրավունքի պրիզմայով՝ պետությունը տարբերակում է նրա վարքի հետևյալ տարատեսակները՝ իրավաբանորեն անտարբեր, իրավաչափ և ոչ իրավաչափ:

Իրավաչափ վարքը իրավական պետության քաղաքացիների գործունեության և արարքների կարևոր հիմքն է: Քաղաքացիների, պաշտոնատար անձանց, հասարակական և մասնավոր կազմակերպությունների՝ իրավունքի բոլոր սուբյեկտների գործողություններն իրավաչափ կլինեն այն դեպքում, եթե դրանք համապատասխանեն սահմանված իրավական նորմերին, այսինքն՝ սուբյեկտիվ իրավունքներին և պարտականություններին:

Գիտականորեն ապացուցված է, որ իրավաչափ վարքը օրինականության և իրավակարգի գոյության կարևորագույն և պարտադիր պայմանն է, իսկ իրավակարգը՝ իրավաչափ վարքի արդյունք:

Երրորդ՝ **«Անձի իրավական հոգեբանությունը որպես իրավաբանական հոգեբանության նորագույն բնագավառ»** ենթագլխում քննարկվում են իրավական հոգեբանության՝ որպես իրավաբանական հոգեբանության նորագույն բնագավառներից մեկի հիմնախնդիրները:

Իրավաբանական հոգեբանության առաջնահերթ խնդիրն է իրավական սոցիալականացման միջոցով մարդու մեջ իրավական գիտակցության ձևավորումը՝ հասարակական գիտակցության կառուցվածքային այն բաղադրամասը, որը բարոյական գիտակցության հետ համատեղ ապահովում է մարդկանց իրավահարաբերությունների և ընդհանրապես սոցիալական կարգավորումը, նրանց օրինապահ վարքը:

Իրավական հոգեբանությունը՝ որպես իրավաբանական հոգեբանության բնագավառ, զարգացման լուրջ հեռանկարներ ունի: Նրա կայացման կենսականորեն կարևոր անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ անձի սոցիալականացման կառուցվածքում ուրույն տեղ ունեցող իրավական ձևավորման, հատկապես իրավագիտակցության հոգեբանական և իրավաբանական մեխանիզմները դեռևս լիարժեք չեն բացահայտված, ինչպես նաև այդ հիմնախնդիրը պետականորեն և հասարակայնորեն համարժեք կարևորված չէ:

Չորրորդ՝ **«Իրավական սոցիալականացման հոգեբանական, իրավական, սոցիալական և մանկավարժական օրինաչափությունները»** ենթազվխում գիտական քննության է ենթարկվում Հայաստանում լիարժեք իրավական հասարակության ձևավորման խնդիրը:

Իրավական սոցիալականացումն այն գործընթացներից է, որոնք անհրաժեշտ են հասարակության բնականոն գործառնման և զարգացման համար:

Գիտական հետաքրքրությունը սոցիալականացման՝ ոչ միայն որպես սոցիալ-հոգեբանական, այլև որպես մանկավարժական երևույթի նկատմամբ ոչ թե տեսաբանների գիտական նախաձեռնություն է, այլ նոր ժամանակների կենսական իրականություն՝ մի շարք համապարփակ միտումների ազդեցությամբ:

Մեթոդաբանական համատեքստում կարելի է առանձնացնել իրավական սոցիալականացման երեք տեսակ.

1. Սոցիալականացում ուսուցման միջոցով, որն այլ բան չէ, քան իրավական տարրական գիտելիքների ձեռք բերում և համապատասխան նորմերի յուրացում:

2. Սոցիալականացում սեփական և այլոց փորձով, որը տեղի է ունենում սեփական կյանքի, ձեռքբերումների և սխալների, այլև շրջապատող մարդկանց կենսափորձի՝ իրավաբանորեն նշանակալի իրադարձությունների իմաստավորման շնորհիվ:

3. Խորհրդանշանային սոցիալականացում՝ հիմնված իրավունքի, պետության, երկրի, ազգի մասին մարդու վերացական պատկերացումների վրա:

Իրավական սոցիալականացման հիմնական օրինաչափություններն ունեն սոցիալական, մանկավարժական և հոգեբանական բնույթ:

Ատենախոսության հինգերորդ՝ «Իրավաբանական մանկավարժության արժեքանական հիմքերը» գլուխը բաղկացած է յոթ ենթազվխից:

Առաջին՝ **«Մանկավարժական երևույթների ուսումնասիրման արժեքանական մոտեցումը»** ենթազվխում արժեքանական մոտեցման իմաստը բացահայտվում է արժեքանական սկզբունքների համակարգի միջոցով, որոնց թվին են պատկանում՝

- արժեքների մարդասիրական համակարգի շրջանակներում փիլիսոփայական հայացքների իրավահավասարություն՝ պահպանելով դրանց մշակութային և էթնիկական առանձնահատկությունների զանազանությունը,
- ավանդույթների և ստեղծագործությունների հավասարազորություն, անցյալի ուսմունքների ուսումնասիրման և կիրառման անհրաժեշտության ճանա-

չում, հոգևոր հայտնագործությունների հնարավորություններ և՛ ներկայում, և՛ ապագայում, ավանդապահների և նորարարների միջև փոխհարստացնող երկխոսության անհրաժեշտություն,

- մարդկանց էքզիստենցիալիստական հավասարություն, սոցիոմշակութային պրագմատիզմ արժեքների, դեմագոգիկ վեճերի փոխարեն, երկխոսություն և առաջընթացություն՝ անտարբերության փոխարեն:

Մանկավարժական արժեքների բազմազանությունը պահանջում է դրանց դասակարգում և կարգավորում, ինչը թույլ է տալիս դրանք ներկայացնել մանկավարժական գիտելիքների ընդհանուր համակարգում: Սակայն այս դասակարգումը, ինչպես և արժեքների հիմնախնդիրներն ընդհանուր առմամբ, մինչև այսօր մանկավարժության մեջ մշակված չեն: Մանկավարժական արժեքները տարբերվում են իրենց առկայության մակարդակով, ինչը և կարող է դառնալ նրանց դասակարգման հիմք: Այս սկզբունքով տարբերվում են անհատական, խմբային և սոցիալական մանկավարժական արժեքները:

Մանկավարժական արժեքանությունն առաջնային է համարում կրթության արժեքանական գործառույթը, որն իր հերթին ներկայացնում է նրա բովանդակությամբ, կազմակերպմանը, կառավարմանը վերաբերող մի շարք մոտեցումներ՝ հաշվի առնելով մարդու ֆիզիկական, հոգեկան առողջությունը որպես հիմնարար արժեքներ: Դրանով հանդերձ մանկավարժական արժեքանությունը հենվում է մարդաբանության փիլիսոփայական հայեցակարգի վրա:

Երկրորդ՝ **«Իրավունքի արժեքանական ուսումնասիրության գիտական, գործնական և բարոյական նշանակությունը»** ենթագլխում հիմնավորվում է, որ իրավունքի արժեքային բնութագրման խնդիրների ամբողջությունը, որը վերջին տարիներին լայն ճանաչում է ձեռք բերել փիլիսոփայական-իրավական ընդհանուր տեսական իրավաբանական դիտարկումներում, բարդ, բազմակողմանի և մեթոդաբանորեն հրատապ է՝ կապված ժամանակակից իրավագիտության զարգացման միտումների հետ՝ իրականության իրավական ընկալման նոր մակարդակների հասնելու համար:

Իրավունքի արժեքանության մեջ առանձնացվում են արժեքների գոյության երեք հիմնական ձևեր՝

1. հասարակական նպատակային արժեքներ և իդեալներ,
2. առարկայորեն մարմնավորված արժեքներ,
3. անձնային կամ էքզիստենցիալ արժեքներ:

Իրավական արժեքները բնույթով դեոնտիկ են և ծառայում են սոցիալական կարգի ու կարգապահության ստեղծմանը, վերարտադրմանն ու ամրապնդմանը՝ մարդկանց տարբեր սոցիալական խմբերի շահերի ներդաշնակեցման նպատակով:

Ազատության գաղափարը բազմանշանակ է, ինչը պատճառ է դառնում բազմաթիվ թյուրըմբռնումների: Ահա թե ինչու անհրաժեշտ է նախապես խոսել այն մասին, թե ի՞նչ իմաստով կարելի է հասկանալ այդ բառը՝ սկսած նրա ամենապարզ և իմացության համար մատչելի նշանակություններից:

Մեծ փիլիսոփաների կարծիքով՝ իրավունքի առաքելությունն ազատության սահմանման և պահպանման առումով չի հանգում նրա սահմանափակմանը, այլ այն դրույթի ընդունմանը, որ անհրաժեշտ են պատշաճ իրավական գործիքներ և իրավական կարգ, որոնք կսահմանեն և կպահպանեն ազատությունը: Այդպիսով՝ իրավունքը պետք է գոյություն ունենա որպես «երկրորդ բնություն» և հենց այդ որակով, մյուս բոլորի շարքում, ուղղորդի մարդուն իր ազատության սահմանները որոնելիս:

Հենց իրավունքն է իր նախնական էությամբ այն ձևը, որը, մարդկանց կողմից ստեղծվելով, տրամաբանորեն և պատմականորեն կանխանշված է լինելու այն ինստիտուտը, որը կոչված է կարգավորելու ազատությունը, նրան հաղորդելու որոշակիություն և ապահովվածություն. այստեղից էլ հենց բխում է նրա մարդկային բովանդակությունը, իսկապես մարդկային արժեքը:

Իրավունքը ազատության իրացման չափն է և, միևնույն ժամանակ, քաղաքական արդարության նորմը: Այլ կերպ ասած՝ իրավունքը նորմատիվորեն ամրագրված արդարությունն է: Իրավունքը հենվում է արդարության գաղափարի վրա:

Արդարության ժամանակակից բոլոր հայեցակարգերի ընդհանուր և պարտադիր նախապայման է հանդիսանում մարդու իրավունքների գաղափարը, այսինքն՝ նրանց հավասարության ընդունումը և հրաժարումը ինչ-ինչ արտոնություններից ու անձեռնմխելիությունից՝ կապված ազգային և կրոնական պատկանելության հետ:

Առանց արդարության՝ իբրև անձնավորության որակի, առանց համապատասխան արժեքային կողմնորոշման՝ արդար իրավական համակարգը չի կարող գործառնել:

Երրորդ՝ **«Մշակույթի արժեքանական հիմքերը»** ենթազվխում նշվում է, որ մշակութաբանության մեջ առանց «արժեք» հասկացության դժվար է առաջ գնալ, քանի որ արժեքները համակարգ են կազմում միայն որոշակի պատմամշակութային համատեքստի շրջանակներում՝ ձևավորելով այս կամ այն մշակույթի միջուկը: Պատահական չէ, որ մշակույթի բազմաթիվ սահմանումների, նրա վերլուծությանը միտված մոտեցումների շարքում գոյություն ունի նաև արժեքանական մոտեցումը, որը մշակույթը մեկնաբանում է որպես արժեքների, նորմերի և ինստիտուտների համակարգ:

Առանց արժեքների՝ մշակութային կյանքն անհնար է, քանի որ արժեքներն են հասարակությանը տալիս կարգավորվածության անհրաժեշտ աստիճան և կանխատեսելիություն: Արժեքների միջոցով, որոնք կուտակվել են մշակույթում, իրականանում է մարդկային գործունեության կարգաբերումը:

Չորրորդ՝ **«Դաստիարակության արժեքանական հիմքերը»** ենթազվխում քննարկվում է դաստիարակության արժեքների հիմնախնդիրը:

Դաստիարակության հիմք ընդունվող արժեքների քննությունը կատարելիս մենք առաջնորդվել ենք հետևյալ մարդասիրական դիրքորոշումներով.

1. Դաստիարակության նպատակը երկու նշանակություն ունի՝ համընդ-

հանուր և տեղային: Համընդհանուր դրսևորման մեջ դաստիարակության նպատակն ըմբռնվում է որպես «կատարյալի իդեալ»՝ այն հասարակության, անձի տեսանկյունից, որի իրացմանն է ուղղված դաստիարակությունը: Իսկ տեղային իմաստով՝ դաստիարակության նպատակն ըմբռնվում է որպես «դաստիարակչական գործունեության ակնկալելի արդյունք»:

2. Այնքանով, որքանով ժամանակակից մանկավարժության համար աքսիոմ է համարվում այն պնդումը, որ դաստիարակության գործընթացը միշտ կապված է դաստիարակության օբյեկտի կողմից այս կամ այն արժեքի յուրացման հետ, որոնցով նա կողմնորոշվում է իր վարքում, ընդունած որոշումներում և դատողություններում, ապա իսկական արժեքների ձևավորման հիմնախնդրի մշակումը պահանջում է «արժեք» հասկացության քննություն կատեգորիալ իմաստով, որը նոր կողմերից է բացահայտում դաստիարակության սովորական դրսևորումները:

Դաստիարակության կարևորագույն՝ իսկական արժեքների թվին կարելի է դասել համամարդկային բարոյական արժեքները՝ բարին, մարդասիրությունը, գթասրտությունը, հանդուրժողականությունը, պարտքը, պատասխանատվությունը, դեպի մարդու ներքին որակները կողմնորոշվածությունը ևն: Թվարկված արժեքների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք բոլորը ուղղորդված են մարդու կատարելագործմանը և նրա կյանքի բարեկեցությանը երկրի վրա:

Հինգերորդ՝ «Անձի իրավական մշակույթի ձևավորման մանկավարժական և իրավաբանական հայեցակետերը» ենթագլխում նշվում է, որ իրավական գիտակցությունը և իրավական մշակույթն ինքնուրույն տեղ են զբաղեցնում իրավական կարգավորման մեխանիզմում: Որպեսզի իրավունքը բարեհաջող գործի հասարակական կյանքում, պետք է գոյություն ունենա ոչ միայն առարկայացված ձևով (նորմատիվ-իրավական ակտերով և այլն), այլ նաև ներքնապես պետք է յուրացված և գիտակցված լինի յուրաքանչյուր անձի կողմից, ստանա անհատական իմաստ և նշանակություն՝ որոշակի պատկերացումների, գիտելիքների, կարծիքների, համոզմունքների ձևով, որոնք արտահայտում են մարդկանց վերաբերմունքն ամբողջությամբ վերցրած իրավունքի նկատմամբ, նրա առանձին նորմերի, օրենսդրական, իրավապաշտպան մարմինների նկատմամբ:

Իրավական մշակույթը ձևավորվում է իրավական դաստիարակության արդյունքում: Իրավական դաստիարակության նպատակն է տալ մարդուն անհրաժեշտ իրավական գիտելիքներ և սովորեցնել հարգել օրենքները:

Իրավական դաստիարակության խնդիրներ են հանդիսանում՝

- գործող իրավունքի համակարգի մասին գիտելիքների, ինչպես նաև իրավական պատվիրանների ճիշտ ըմբռնման և պարզաբանման մասին գիտելիքների համակարգի ձևավորումը,
- իրավունքի հանդեպ ներքին խոր հարգանքի ձևավորումը,
- գործնականում իրավական գիտելիքներն ինքնուրույն կիրառելու ունակ-

կությունների ձևավորումը,

- օրենքին համապատասխան վարքագիծ ունենալու սովորույթի ձևավորումը,

- իրավաչափ վարքի դրսևորման և իրավական ցանկացած նորմ խախտելու հանդեպ բացասական դիրքորոշման ձևավորումը:

Վեցերորդ՝ «**Իրավական դաստիարակությունը որպես իրավական մշակույթի գործոն և իրավական նիհիլիզմի հաղթահարման միջոց**» ենթագլխում իրավական դաստիարակությունը դիտարկվում է որպես իրավական նիհիլիզմի հաղթահարման միջոց: Իրավական գիտակցության ձևախեղմաներից մեկն է իրավական նիհիլիզմը՝ մի երևույթ, որը բացասաբար է ազդում օրինականության, հասարակական կարգուկանոնի, նաև անձի դրական ակտիվության զարգացման վրա: Տվյալ իրավիճակն իրավական նիհիլիզմի հետազոտումը դարձնում է արդիական և հրատապ՝ ներգրավելով այդ հարցում հումանիտար գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետների ուշադրությունը:

Իրավական նիհիլիզմի հաղթահարման էական գործոն է իրավական և բարոյական արժեքների խոր փոխկապակցվածության հաստատումը:

Ինչպես բոլոր մանկավարժական երևույթներին, այնպես էլ իրավական դաստիարակությանը բնորոշ են պատճառահետևանքային կապերը՝ մանկավարժական ազդեցության և նրանց արդյունքների միջև: Կարևորներից մեկն այն է, որ դաստիարակում է ոչ միայն կոնկրետ մարդը (ուսուցիչը կամ դաստիարակը), այլ նաև առօրյա կյանքը, և կարևոր է, որ դրանց ազդեցությունները լինեն համաձայնեցված: Այս պատճառահետևանքային կախվածությունն իր արտացոլումն է գտնում հատուկ մանկավարժական սկզբունքներում, որոնց հիման վրա խորհուրդ է տրվում կառուցել իրավական դաստիարակությունը.

- հարմարվողականության սկզբունք
- համընդգրկունության և անընդհատության սկզբունք
- պետության իրավական մոտեցման սկզբունք
- բարոյական և իրավական դաստիարակության ամբողջության սկզբունք
- սոցիալ-իրավական սպասարկման սկզբունք
- իրավունքի և պատասխանատվության սկզբունք
- սոցիալական իրավապաշտպան ու իրավապահպան գործունեության մեջ քաղաքացիների ակտիվ մասնակցության սկզբունք

- իրավական ինքնադաստիարակության սկզբունք:

Յոթերորդ՝ «**Իրավական դաստիարակության, իրավագիտակցության և իրավական մշակույթի արժեքանական հայեցակետը**» ենթագլխում նշվում է, որ արդի մանկավարժության և իրավագիտության մեջ իրավական դաստիարակության խնդիրները նոր հնչեղություն են ձեռք բերում: Դրանց բարդությունն ու բազմապլանայնությունը ենթադրում են բազմաձև մեթոդների կիրառում: Իրավունքի արժեքանությունն առաջարկում է մի շարք հնարավորություններ՝ իրավադաստիարակչական ներգործության կատարելագործման արդյունավետ

եղանակների որոշարկման համար: Այս տեսանկյունից իրավական արժեքների յուրացումը ներկայանում է իրավական դաստիարակության կարևորագույն նպատակներով ու բովանդակությամբ:

Իրավական դաստիարակության գործընթացը՝ որպես անձի արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորում, երեք հիմնական փուլ ունի.

1. սուբյեկտի՝ հնարավոր արժեքային կողմնորոշումների վերաբերյալ անհրաժեշտ իրազեկումների ձեռք բերում,

2. մարդու՝ արժեքային կողմնորոշումների մասին ձեռք բերած գիտելիքների՝ անդրադարձման միջոցով իրավական վարքի ներքին դրվածքի վերաձում,

3. հասարակական կյանքում և իրավական վարքի մեջ տվյալ կողմնորոշումների նկատմամբ արժեքային գիտելիքների և դրվածքների իրացում:

Իրավական մշակույթի արժեքանական գործառույթը կոչված է լուծելու եռմիասնական խնդիր՝ 1) զարգացնել անձի ազատության ըմբռնումը՝ որպես կարևորագույն արժեք, 2) ներմուծել այդ ըմբռնումը կամ հասկացությունը օրենսդրի, օրենքը կիրառողի և յուրաքանչյուր քաղաքացու գիտակցություն, 3) այդ գաղափարը դարձնել ամեն մի իրավաբանական փորձառության կարևորագույն չափանիշ:

Առենախոսության վեցերորդ՝ «Իրավաբանական մանկավարժության մանկավարժական հիմքերը» գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին՝ «Իրավական դաստիարակության դերը «Իրավագիտություն» մասնագիտության ուսանողների գիտական աշխարհայացքի ձևավորման գործում» ենթագլխում հիմնավորվում է իրավապահ մարմինների համար բարձր մասնագիտական որակներ ունեցող աշխատակիցների պատրաստման գաղափարը, որը ենթադրում է նրանց գիտական աշխարհայացքի ձևավորում:

Աշխարհայացքի ձևավորման միջոցներ են ուսուցման գործընթացը, արտալսարանային գործունեությունը, սովորողների ինքնուրույն աշխատանքը, փորձը, որ ձեռք է բերվում հաղորդակցման ժամանակ և կյանքում:

Ուսանողների գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացը կառուցվում է՝

- ուսանողների կողմից փիլիսոփայական, պատմական, սոցիալ-քաղաքական, հոգեբանա-մանկավարժական, իրավական և այլ գիտելիքների յուրացման վրա՝ պարապմունքների տարբեր ձևերի ժամանակ հումանիտար առարկաների յուրացման գործընթացում,

- իմաստավորման, քննարկման, վերլուծության, համեմատության, գնահատման, ընդհանրացման և այլ միջոցներով ձեռք բերված գիտելիքների խորացման և զարգացման վրա՝ ինքնուրույն աշխատանքի ընթացքում և պարապմունքների ժամանակ, քաղաքացիական վարքագծի հմտությունների հիման վրա ձեռք բերված գիտելիքների ձևավորման վրա,

- ստացած գիտելիքների կիրառման, քաղաքացու իրավունքների ու պարտականությունների իրականացման գործընթացում քաղաքացիական վարքագծի հմտությունների զարգացման ընթացքում՝ ցածր կուրսերում ստաժավոր-

ման ընթացքում,

- ստացած գիտելիքների վերահսկման, քաղաքացիական հատկանիշների և քաղաքացիական վարքագծի զարգացման մակարդակի վրա՝ ուսանողների ինքնագնահատման և ուսուցանողների փորձագիտական գնահատման միջոցով:

Երկրորդ՝ **«Իրավաբանական կրթության մանկավարժահոգեբանական հիմնավորումները»** ենթազխում նշվում է, որ նկատի առնելով տարբեր ենթաճյուղի և ուղղության իրավաբանների գործունեության յուրահատկությունը, մասնագիտության հանրային հատուկ նշանակությունը՝ իրավագիտության ոլորտի գործունեությունն իր սուբյեկտին ներկայացնում է որոշակի արժեքային նորմատիվ պահանջներ: Այդպիսի մասնագետների պատրաստումը նպատակաուղղված է մասնագիտական-արժեքային և որակային հատկանիշների ձևավորմանը:

Դրանք հիմք են դառնում իրավաբանի անձի բարոյահոգեբանական առանձնահատկությունների զարգացման համար:

Այս ամենն իրավաբանական մասնագիտական խնդիրների նկատմամբ գիտական իրավաչափության և հոգեբանական մոտեցման անհրաժեշտության վկայությունն է:

Կրթական գործընթացն ամբողջական համակարգ է, և նրա բարելավումը կարող է հաջողության հասնել միայն համակարգային մոտեցման դեպքում:

Առաջին պայմանն ուսումնական հաստատության և ողջ կրթական գործընթացի լիակատար համապատասխանեցումն է մեր հասարակության բարեփոխման և իրավական պետության ստեղծման պահանջներին:

Երկրորդ պայմանն այն է, որ մասնագիտական-կրթական նպատակային գործընթացը ձևավորվի մանկավարժահոգեբանական հիմքի վրա:

Երրորդ պայմանն իրավաբանական ուսումնական հաստատության բոլոր կարողությունների և հնարավորությունների ուղղորդումն է դեպի ուսանողները:

Չորրորդ պայմանը մասնագիտական-կրթական գործընթացում իրավաբան-անձի ձևավորումն է: Դա ոչ միայն բարձրագույն նպատակ է, այլև բուն գործընթացի արդյունավետության պարտադիր պայման:

Հինգերորդ պայմանը ուսանողների ուսուցման առավելագույն ծանրաբեռնվածությունն է:

Վեցերորդ պայմանը կրթական գործընթացի կառուցումն է արդի հոգեբանամանկավարժական արդյունավետ տեխնոլոգիաների հիման վրա:

Երրորդ՝ **«Ապագա իրավաբանների դաստիարակության առանձնահատկությունները բուհում»** ենթազխում ելնելով իրավաբանական կրթության նպատակներից՝ ձևակերպվել են իրավաբանական բուհի ուսանողների դաստիարակության հետևյալ խնդիրները.

- ուսանողների գիտական աշխարհայացքի ձևավորում, որի հիմքն են կազմում պրոֆեսիոնալիզմը, քաղաքացիականությունը, բարոյականությունը, նվիրվածությունը, օրինականությունը,

- դրական ուսումնական շահադրդման զարգացում, ստեղծագործական վերաբերմունք սեփական պարտավորությունների կատարմանը, ուսումնական և հասարակական գործունեության մեջ բարեխղճության և ակտիվության ապահովում,

- յուրաքանչյուր ուսանողի անձի ներդաշնակ, ամբողջական կողմնորոշված զարգացում՝ հիմնված նրա հնարավորությունների և մասնագիտական գործունեության պահանջների վրա,

- համամարդկային և ազգային արժեքների մարդասիրական և ժողովրդավարական ավանդույթների յուրացում, մասնագիտորեն կարևոր հատկանիշների զարգացում՝ արդարամտություն, բարություն, ազնվություն, անշահախնդրություն, պատասխանատվություն, ճշմարտության ձգտում, մարդասիրություն, անկախություն,

- կլիեկտիվում շփման և փոխհարաբերությունների բարձր մշակույթի ձևավորում:

Չորրորդ՝ **«Բուհերի իրավաբանական մասնագիտությունների պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումը որակի կառավարման համակարգում և նրանց մանկավարժամասնագիտական կոմպետենտությունը»** ենթագլխում հիմնավորվում է այն դրույթը, որ բարձրագույն դպրոցի դասավանդողը պետք է ունենա բարձրագույն ուսումնական հաստատությունում մանկավարժական գործունեության համալիր հոգեբանամանկավարժական, սոցիալ-տնտեսական և տեղեկատվական-տեխնոլոգիական պատրաստվածություն:

Բուհի դասախոսի աշխատանքին հատուկ կոմպետենտությունը մենք պայմանականորեն բաժանել ենք չորս խմբի՝

- 1) կառավարչական
- 2) մանկավարժական
- 3) հոգեբանական
- 4) մասնագիտական:

Բացի այդ՝ տվյալ մասնագիտության յուրահատկությունից կախված՝ պարտադիր որակների թվին պետք է դասել բարեկրթությունը, բարոյականությունը, բարյացակամությունը, դասախոսի օբյեկտիվությունն ու արդարացի վերաբերմունքը, ակտիվությունը, ճշտապահությունը, հնքնակազմակերպվածությունը:

Բարձրագույն կրթության արդի համակարգը, կապված բարձրագույն կրթության այն նոր ձևատիպարի հետ, որ կողմնորոշված է դեպի ուսումնական գործընթացի անհատականացումը, նոր պահանջներ է ներկայացնում բարձրագույն դպրոցի դասախոսների մասնագիտությանը: Դրանք հետևյալներն են.

- նորարարական գործընթացների աշխուժացում կրթության ոլորտում,
- բարձրագույն դպրոցի կրթական ծրագրերի բարեփոխում,
- կրթական գործընթացի տեխնոլոգիական հագեցման բարձրացում,
- կրթության ոլորտում միջգիտակարգային միավորման սերտացում և միավորման գործընթացների ծավալում ու զարգացում,

- մտավոր աշխատանքի շուկայի պահանջարկի փոփոխություն,
- շուկայական միջավայրին բուհերի հարմարակման անհրաժեշտություն,
- բարձրագույն դպրոցի դասախոսի դերային գործունեացման բարձրացում:

Իրավաբանական բարձրագույն մասնագիտական կրթության գլխավոր խնդիրը կրթության նորարարական գործընթացի իրացումն է, որը նպատակաուղղված է բուհերի շրջանավարտների այնպիսի պատրաստվածությունը, որն ուսուցման ընթացքում կապահովեր նրանց առաջ դրված մասնագիտական խնդիրների քիչ թե շատ արդյունավետ լուծում ոչ միայն նրանց մատուցվող տեսական գիտելիքների, կարողությունների և մասնագիտական հմտությունների զինանոցի, այլև իրատեսական ժամանակամիջոցում հասարակության մեջ տեղի ունեցող դինամիկ փոփոխություններին համապատասխան սեփական գիտելիքների արդիականացման ունակության շնորհիվ:

Մանկավարժամասնագիտական գիտակությունը իրավաբանական կրթության որակի բարձրացման առանցքային գործոն է:

Հինգերորդ՝ «**Իրավաբանի մանկավարժական մշակույթը**» ենթագլխում դիտվում են այն պահանջները, որոնք վերաբերում են իրավաբանների մասնագիտական որակների և իրավադաստիարակչական աշխատանքների մակարդակի բարձրացմանը: Իրավաբանը՝ իբրև անձ, այդ պահանջներն ընկալում է որպես մանկավարժական մշակույթ, որը մասնագիտական մշակույթի բաղադրիչ տարրերից է: Իրավաբանի մանկավարժական մշակույթը քաղաքացիների իրավական դաստիարակության իրականացման համար տեսության և մեթոդիկայի ստեղծագործական տիրապետումն է մանկավարժության տեսության, տեխնոլոգիայի և մասնագիտական տակտի հիման վրա:

Ընդունված է համարել, որ հաջող իրավաբանական գործունեություն են ապահովում դիդակտիկ ունակությունների տիրապետող իրավաբանները՝ հաղորդունակություն, կառուցողական ունակություններ, ճանաչողական ունակություններ, ըմբռնողական ունակություններ, մտավոր ունակություններ:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Իրավաբանական մանկավարժությունն իրավաբանական և մանկավարժական գիտելիքների սահմանում գտնվող միջակա բնագավառ է, որը հիմնական հատկանիշներով ոչ թե իրավագիտության, այլ մանկավարժության գիտաճյուղ է:

2. Իրավաբանական մանկավարժության առարկան իրավական ոլորտում առկա իրավական-մանկավարժական իրականությունն է, մանկավարժական փաստերը, կրթության, ուսուցման, դաստիարակության ու զարգացման օրինաչափություններն ու մեխանիզմները:

3. Իրավաբանական մանկավարժության հասկացությունները տարբերվում

են յուրատիպությամբ, քանզի արտացոլում են իրավաբանական մանկավարժության իրողությունների ու երևույթների հատկությունները և դասակարգվում են հետևյալ կերպ՝ համակարգային կատեգորիաներ, իրավապահպան գործունեության ապահովման իրավաբանամանկավարժական համակարգի կատեգորիաներ, մանկավարժական մասնավոր կատեգորիաներ:

4. Իրավաբանական մանկավարժությունն իր, այսպես կոչված, «իրավաբանական մասում» ելնում է իրավական իրողությունից, իսկ «մանկավարժական մասում» մոտենում է դրան գիտամանկավարժական դիրքերից, խորանում է մանկավարժական իրողությունների հետազոտությունների մեջ, ընդ որում՝ ղեկավարվելով ընդհանուր մանկավարժության գիտական նվաճումներով և հարմարվելով դրանց նպատակների ու խնդիրների առանձնահատկություններին: Արդյունքում՝ գլխավոր բնութագրիչներում այն հանդես է գալիս որպես մանկավարժական գիտություն, մանկավարժության գիտաճյուղ, այլ ոչ թե «մանկավարժացված իրավագիտություն»:

5. Իրավաբանական մանկավարժության կողմից հետազոտվող իրողությունները յուրահատուկ են ոչ միայն իրավաբանական, այլև մանկավարժական տեսանկյունից: Իրավաբանամանկավարժական հետազոտությունների և գիտելիքների յուրահատկությունները, դրանց առանձնահատուկ գիտական և գործնական արժեքներն առաջանում են միայն այն դեպքում, երբ առանձնահատկությունը բացահայտվում է մանկավարժական ա՛յն իրականության մեջ, որը գոյություն ունի իրավունքի ոլորտում: Դա իմացաբանական, մեթոդաբանական և տեսական անհրաժեշտություն է:

6. Իրավաբանական մանկավարժության մեթոդաբանության բուն էությունն արտահայտվում է մանկավարժական գիտության ընդհանուր մեթոդաբանական, հետազոտության հիմնական սկզբունքներում և մանկավարժական իրականության երևույթների գնահատման մեջ, որոնցից կարևորներն են օբյեկտիվության, պատճառայնության, փոխկապակցման և փոխգործունեության, համակարգվածության և զարգացման սկզբունքները:

Հիմնական և յուրահատուկ իրավաբանամանկավարժական օրինաչափությունները և դրանց ամբողջությունն իրենց արտացոլումն են գտնում իրավաբանական մանկավարժության հատուկ գիտական սկզբունքներում՝ մանկավարժական առարկայականության, իրավաբանամանկավարժական յուրահատկության, դաստիարակության, կրթության, ուսուցման, զարգացման, գործունեության, կենսաձևի, մարդու գործողությունների միասնականության, իրավաբանամանկավարժական հիմնախնդիրների և դրանց լուծման, առանձնահատուկի և ոչ առանձնահատուկի, էականի և միջնորդավորվածի միասնության, արդիականության, մարդասիրության և օրինականության, կառուցողականության:

7. 21-րդ դարի սկզբին ի հայտ եկած հայեցակարգերը՝ հիմնված մարդաբանական գաղափարների վրա, ունենալով արժեքանական, անհատա-գործաբանական, սոցիոլոգիական, հերմենևտիկական ու մարդաբանական այլ բնու-

թագրեր, իրավաբանական մանկավարժություն են ներառում մեթոդաբանական և կարգային նոր միջոցներ՝ վերանայելով մանկավարժական գործընթացի բաղադրիչները մարդակազմավորման գործառույթի լույսի ներքո: Մանկավարժական մարդաբանությունը, գտնվելով մարդաբանական գիտությունների համակարգում, իրավաբանական մանկավարժության համար բացում է լայն տարածություն, որի կենտրոնում մարդն է:

8. Իրավաբանական մանկավարժությունը մանկավարժության այն ոլորտն է, որը լուծում է մարդկանց կողմից՝ դաստիարակվածության, կրթվածության և զարգացվածության քաղաքակրթորեն զարգացած մանկավարժական հատկություններ ձեռք բերելու խնդիրը՝ հարմարեցնելով այն իրավական ոլորտի և իրավապահ մարմինների գործունեությանը:

9. Իրավապահ մարմիններն իրենց իրավաբանական, օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքներին հասնելու համար պետք է միաժամանակ լուծեն մանկավարժական խնդիրներ, այդ գործունեության մեջ հմտորեն ներմուծեն մանկավարժական կառուցվածքի տարրեր, օգտվեն մանկավարժական մեթոդներից և միջոցներից, ունենան համապատասխան մասնագիտամանկավարժական պատրաստվածություն:

10. Քաղաքացիական հասարակության և իրավական պետության կառուցման գործում կտրուկ բարձրանում և շարունակաբար աճում է օրինականության և իրավակարգի ամրապնդման մանկավարժական հիմնախնդիրների լուծման նշանակությունը՝ իրավաբանական մանկավարժության հնարավորությունների օգտագործմամբ:

11. Հասարակության մեջ և իրավական ոլորտում մանկավարժական իրողությունը, հոգեբանականի հետ միասին, իրավունքի և իրավական քաղաքականության զարգացման գործում ունի հատուկ նշանակություն: Անգործունակ և վտանգավոր են բոլոր այն «առաջադիմական» օրենքները, որոնք չեն համապատասխանում մանկավարժական իրողությանը, հաշվի չեն առնում բնակչության կրթվածության, ինտելեկտուալ զարգացման մակարդակը, նրանց իրավական իրազեկվածությունը, ժողովրդավարական և իրավական փորձը:

12. Հանցավորությունը՝ որպես սոցիալական երևույթ, այլ պատճառների թվում, ունի նաև մանկավարժական պատճառներ: Շեղվող վարքի առաջացման ու զարգացման անհատական պատճառները գրեթե միշտ կապված են անձի մանկավարժական բարձիթողի վիճակի, ոչ բավարար իրավական կրթության և դաստիարակության, իրավագիտակցության հետ: Այդ պատճառով մանկավարժական գործոնների ու պայմանների անտեսումը կամ թերագնահատումն անխուսափելիորեն հանգեցնում է իրավախախտումների աճի:

13. Իրավական սոցիալականացման ընդհանուր գործընթացում առանձնացվում է իրավական դաստիարակությունը՝ որպես իրավաչափ վարքի գիտելիքների, համոզումների և հիմնավորումների համակարգի ձևավորման գործընթաց: Իրավական դաստիարակությունը դրսևորվում է որպես իրավական սոցիալականացման արդյունավետ մեխանիզմ՝ նպատակաուղղված իրավագի-

տակցության, անձի իրավական մշակույթի, սոցիալական-իրավական ակտիվ գործունեության ձևավորմանը:

14. Իրավական գիտակցության ձևախեղումներից է իրավական նիհիլիզմը, որը բացասաբար է ազդում օրինականության, հասարակական կարգուկանոնի, նաև անձի դրական ակտիվության զարգացման վրա: Տվյալ իրավիճակը իրավական նիհիլիզմի հետազոտումը դարձնում է արդիական և հրատապ:

15. Իրավական մշակույթի արժեքանական գործառույթը կոչված է լուծելու եռմիասնական խնդիր՝ 1) զարգացնել անձի ազատության ըմբռնումը՝ որպես կարևորագույն արժեք, 2) ներմուծել այդ ըմբռնումը կամ հասկացությունն օրենսդրի, օրենքը կիրառողի և յուրաքանչյուր քաղաքացու գիտակցություն, 3) այդ գաղափարը դարձնել ամեն մի իրավաբանական փորձառության կարևորագույն չափանիշ:

16. Ապագա իրավաբանի մասնագիտական պատրաստվածության կարևոր բաղադրիչ է նրա մանկավարժական կոմպետենտությունը, որն ունի իր առանձնահատկությունները և ուղղակիորեն ներգործում է իրավաբանի մասնագիտական գործունեության վրա:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում:

1. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավաբանական մանկավարժությունը Հայաստանի Հանրապետության իրավապահպան համակարգում // Մենագրություն: Եր., Ա/Ձ «Արման Ամանգուլյան» տպագրատուն, 2016, 272 էջ:

2. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավունքի հետազոտման և կատարելագործման մանկավարժական ասպեկտի մի քանի հարցեր, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական հանդես, Եր., «Իրավունք» հրատ., 2008, N1, էջ 19-20:

3. **Բրուտյան Վ. Ա., Դերձյան Գ. Հ.**, Մանկավարժությունը և իրավապահ պրակտիկան, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական հանդես, Եր., «Իրավունք» հրատ., 2009, N11, էջ 14-16:

4. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավական դաստիարակությունը և զանգվածային լրատվական միջոցները, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական հանդես, Եր., «Իրավունք» հրատ., 2010, N5, էջ 1-2:

5. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական ձևախեղման պատճառները և մանկավարժական կանխարգելումը, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական հանդես, Եր., «Իրավունք» հրատ., 2010, N8, էջ 3-4:

6. **Բրուտյան Վ. Ա., Հովհաննիսյան Ա. Ս.**, Դատական գործընթացը քաղաքացիների իրավական դաստիարակության և կրթության միջոց, «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական հանդես, Եր., «Իրավունք» հրատ., 2011, N2, էջ 13-14:

7. **Բրուտյան Վ. Ա.**, Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումը բուհի որակի կառավարման համակարգում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հան-

դես, Եր., «Իրավաբանական կենտրոն-Press» հրատ., 2011, 4-6(30), էջ 4-8:

8. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավաբանական կրթության մանկավարժական համակարգը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2012, 10-12(35), էջ 52-55:

9. **Բրուտյան Վ. Ա.**, Անձի իրավական մշակույթի ձևավորման մանկավարժական և իրավաբանական հայեցակետերը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2013, 4-6(37), էջ 4-10:

10. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավական մշակույթը որպես ժամանակակից բարձրագույն դպրոցի մանկավարժի անհրաժեշտ պայման: «Մխիթար Գոշ» // Ուսումնամեթոդական հոդվածներ, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2014, N1(40), էջ 8-11:

11. **Բրուտյան Վ. Ա.**, Երիտասարդության իրավական դաստիարակությունը որպես հասարակության իրավական մշակույթի տարր: Տարև գիտակրթական համալիր, ԵՊՀ, «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Ձանգակ» հրատ., 2015, էջ 65-68:

12. **Բրուտյան Վ. Ա.**, Մանկավարժական մարդաբանությունը մանկավարժական և մարդաբանական գիտությունների համակարգում, «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, Եր., «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարան, թիվ 4(68), 2016, էջ 118-127:

13. **Բրուտյան Վ. Ա.**, Մանկավարժությունը իրավապահ մարմինների կառավարման գործընթացում, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Եր., «ՎԱՐԴ ՀՐԱՏ» ՍՊԸ տպագրատուն, 2016, N10, էջ 152-159:

14. **Բրուտյան Վ. Ա.**, Մանկավարժությունը և կրթության փիլիսոփայությունը, «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, Եր., «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարան, թիվ 5(69), 2016, էջ 111-118:

15. **Բրուտյան Վ. Ա.**, Փիլիսոփայությունը ժամանակակից աշխարհում, «Մխիթար Գոշ» // Գիտական հոդվածներ, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2016, N2(45), էջ 8-14:

16. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավաբանական մանկավարժության մեթոդաբանության առանձնահատկությունները: «Մանկավարժական միտք», Եր., «Ձանգակ» հրատ., 2016, 3-4(62-63), էջ 5-11:

17. **Բրուտյան Վ. Ա.**, Իրավաբանական կրթության որակի բարձրացման ժամանակակից խնդիրները: ԵՊՀ, «Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 366-376:

18. **Брутян В. А.**, Правовое воспитание как одной из средств преодоления правового нигилизма (на примере Армянской Республики). “Право и образование” // Научный журнал. М., ГУП МО “Коломенская типография”, “2014, N1, с. 55-64.

19. **Брутян В. А.**, Педагогическая характеристика процесса правовой социализации личности. “Право и образование” // Научный журнал. М., ГУП МО “Коломенская типография”, 2014, N2, с. 110-118.

20. **Брутян В. А.**, Педагогическая, социальная и психологическая природа закономерностей правовой социализации личности. ИЦРОН: Актуальные вопросы психологии и педагогики в современных условиях. Вып. 2, сб. научных трудов по итогам международной научно-практической конференции (14 Января 2015 г.), Санкт-Петербург, 2015, с. 23-25.

21. **Брутян В. А., Геворгян П. О.**, Психолого-педагогические основания юридического образования. Евразийский союз ученых. XXI международная научно-практическая конференция “Современные концепции научных исследований”. М., 29-30 декабря 2015, ч.3, N12(21)/2015, с. 42-45.

22. **Брутян В. А.**, Профессионально-педагогическая компетентность преподавателя юридических специальностей вузов. “Современные наукоемкие технологии”. М., ООО “Научно-издательский центр Академия Естествознания”, 2016. N4 (часть 2), с. 314-318.

23. **Брутян В. А.**, Аксиологический аспект правового воспитания, правосознания и правовой культуры. “Современные наукоемкие технологии”. М., ООО “Научно-издательский центр Академия Естествознания”, 2016. N8 (часть 1), с. 101-105.

24. **Брутян В. А.**, Особенности воспитания будущих юристов в вузах. “Современные наукоемкие технологии”. М., ООО “Научно-издательский центр Академия Естествознания”, 2016. N9 (часть 2), с. 259-263.

БРУТЯН ВАЧИК АРАМАИСОВИЧ
КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВЫ ЮРИДИЧЕСКОЙ ПЕДАГОГИКИ

Диссертация на соискание ученой степени доктора педагогических наук по специальности 13.00.01. “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 16 марта 2018 г. в 14⁰⁰ на заседании действующего при ЕГУ специализированного совета ВАК РА по педагогике 065. Адрес: 0025, г.Ереван, ул. Абовяна 52а, ЕГУ, корпус 8, аудитория N203.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Время диктует необходимость реформ в использовании педагогических возможностей в юридической сфере. Необходимо целостное осознание отдельных исследований, выявление специфических особенностей изучения закономерностей реальности, разработка равноценных парадигм, методологии, теории, способных повысить уровень педагогических разработок.

В РА на данном историческом этапе создания гуманистического, демократического, гражданского, правового общества, когда социальная справедливость, жизнь, права, достоинство личности каждого человека должны стать высшими ценностями, резко возросла ответственность юридической педагогики: для последнего открылись новые возможности развития и широкая арена для научных изысканий с целью обеспечения безопасности и свободы в жизни каждого гражданина.

Цель исследования. Разработать концептуальные основы юридической педагогики, возникшей на стыке юридических и педагогических дисциплин.

Задачи исследования:

1. Изучить философские, антропологические, аксиологические, психологические, юридические и педагогические научные источники, выделить и раскрыть те предпосылки, которые являются концептуальным основанием для процесса формирования и становления нового педагогического научного направления – юридической педагогики, определить её цели, задачи и возможности развития в РА.
2. Осуществить теоретическое исследование вопросов права, правопорядка и оценить их с концептуальной позиции в соответствии с юридическо-педагогическими особенностями этих проблем.
3. Изучить, раскрыть и обосновать предмет дисциплины “Юридическая педагогика”, её феноменологию и закономерности.
4. Выделить основные категории юридической педагогики, дать их характеристики, указать на их взаимосвязь.
5. Разработать основы методологии исследования юридической педагогики как науки.
6. Обосновать необходимость особых принципов юридической педагогики, которые способны показать его логико-структурную специфику и гуманную сущность.
7. Теоретически обосновать роль правового воспитания, правовой культуры и правосознания в работе субъекта в профессиональной юридической деятельности.
8. Обосновать необходимость обеспечения деятельности правоохранительных органов РА педагогическими составляющим.
9. Раскрыть взаимосвязь между деятельностью правоохранительных органов и педагогическими проблемами, разработать требования, которые предъявляются к профессионально-педагогической подготовке работников этих органов.

10. Выявить и охарактеризовать основные элементы педагогических систем: цели, задачи, методы, сущность, условия и т.д., осуществляющих образовательный процесс в соответствующих отделениях вузов по юридическим специальностям.

Научная новизна исследования.

- Разработаны философские, антропологические, юридические, психологические, аксиологические основы юридической педагогики.
- Научно обоснованы предпосылки и факторы формирования юридической педагогики, разработаны теоретические и методологические основы.
- Определены основные понятия юридической педагогики, выявлено содержание их функций, обоснованы их принципы.
- Выявлены некоторые закономерные связи между общественной сферой и педагогикой.
- Представлены педагогические подходы, цели, задачи, содержание, формы и методы процесса в системе высшего юридического образования РА.
- Систематизированы и оформлены индивидуальные и профессиональные компетенции преподавателей в сфере современного юридического образования в контексте обеспечения качества образования.
- Выявлены основные тенденции развития высшего юридического образования в современных условиях.

Теоретическая значимость исследования.

- Проблемы юридической педагогики частично были рассмотрены и в правоведении, и в педагогике, однако в данном исследовании были проанализированы и обоснованы их философские, антропологические, юридические, психологические, аксиологические и педагогические основы, что сделало изучение данной проблемы более целостным и всеобъемлющим.
- В результате разработки методологических и теоретических основ исследования утверждена новая научная отрасль педагогики - юридическая педагогика.
- Данные исследования, являясь систематизированной теоретической разработкой, вносят значительный вклад в педагогическую науку, восполняя её новыми юридическо-педагогическими знаниями, которые крайне необходимы в процессе строительства правового государства и гражданского общества.

Практическая значимость исследования.

- Практическая значимость исследования заключается в его направленности на решение проблем в системе профессионального образования в РА. Предложения и выводы, которые были сделаны в результате исследования, могут способствовать совершенствованию системы высшего юридического образования в РА.
- Теоретические положения и выводы исследования могут быть использованы как при составлении учебных пособий и методических материалов по теории и истории педагогики, так и в процессе подготовки и повышения квалификации юридических кадров.
- Результаты исследования могут быть использованы в процессе преподавания вузовской дисциплины “Юридическая педагогика”.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, шести глав, заключения, списка использованной литературы. Текст диссертации, включая список литературы, составляет 311 компьютерных страниц.

VACHIK ARAMAIS BRUTYAN
LEGAL PEDAGOGY CONCEPTUAL BASES

Dissertation for the degree of Doctor of Pedagogy 13.00.01 in “Theory and History of Pedagogy”.

The Defence will be held on March 16, 2018, 14 p.m. at the RA SCC Pedagogy (065) Council Session, Yerevan State University. Address: 0025, Abovyan str., 52a, Yerevan, YSU, building 8, room N203.

SUMMARY

The Research modernity. Time dictates Pedagogical abilities usage improvement necessity in the legal sphere. It's necessary to realize particular studies completely, reveal special peculiarities of the reality regularities investigation, develop the adequate paradigm, methodology, theory, which can also improve pedagogical materials development level. In the Republic of Armenia at this humane, democratic, civil, legal society formation historical stage, when social equity, each person's life, right, human dignity must be the highest value, social responsibility of Legal Pedagogy has greatly increased and now there exist new development opportunities and a broad sphere of scientific search for the purpose of each person's safe and free life guaranteeing.

The Research goal is to develop the science of Legal Pedagogy conceptual bases aroused within the Legal and Pedagogical Sciences.

The Research Objectives.

1. To investigate philosophical, anthropological, estimation, psychological, legal researches, distinguish and reveal all those prerequisites which form a conceptual base in the process of the new Pedagogy branch - Legal Pedagogy origin and accomplishment, define its goal, objectives and development opportunities in the RA.

2. Implement a pedagogical investigation on the law, law and order, law enforcement legal application problems and assess them from, the angles of methodological, conceptual and constructivism approach in accordance with the legal-pedagogical peculiarities of those problems.

3. Investigate, reveal and give reasons for the Legal Pedagogy scientific discipline, its phenomenon and regularities.

4. Distinguish the main categories of Legal Pedagogy, define them, state their mutual relations and interdependence.

5. Develop the research methodological fundamentals of the Legal Pedagogy as a science.

6. Reveal and give reasons for Legal Pedagogy special principles necessity which reveal its logical- structural peculiarity and philanthropical nature.

7. Give reasons for legal education, legal culture and legal consciousness role in the activity of professional legal subjects, develop their components.

8. Give reasons for the necessity to provide the RA law-enforcement agencies activity with a pedagogical component.

9. Reveal the mutual relations between the RA law- enforcement agencies activity and pedagogical problems, requirements for the professional -pedagogical preparedness of the labourers of those agencies.

10. Reveal and define the main components of the educational process and pedagogical system in the law departments i.e. goal, objectives, contents, methods, conditions, etc.

The Research scientific novelty.

- We've developed the philosophical, anthropological, legal, psychological, pedagogical, validity bases of Legal Pedagogy.
- We've given scientific reasons for the prerequisites and factors of Legal Pedagogy formation, theoretical and methodological bases.
- We've defined the main conceptions of Legal Pedagogy, revealed its functions contents, given reasons for the principles.
- We've revealed certain regular relations between the society legal sphere and Pedagogy.
- We've presented pedagogical approaches of the RA university law education, the procedure goals, objectives, contents, forms and methods.
- We've systematized and formulated the educators' personal professional competences of the current legal education sphere within the framework of education quality assurance.
- We've revealed the current trends in higher legal education development.

The Research Theoretical Importance.

- The Legal Pedagogy problems have particularly been observed both in Jurisprudence and Pedagogy, but we've analyzed and given reasons for its philosophical, anthropological, legal, psychological, validity and pedagogical bases which made the subject matter study more coverable and complete.
- The new branch of Pedagogy, i.e. Legal Pedagogy is recognized by the development of methodological and theoretical fundamentals of the research.
- The present research being a systematized theoretical development can make significant contribution to the Pedagogical science enriching it with a good command of legal-pedagogical knowledge which is of great importance in the legal state-building process.

The Research Practical Importance.

- The research practical importance is that it tends to solve the problems, which exist in the RA professional education system.
- The research conclusions and suggestions can contribute to the improvement of the RA higher legal education system. The research theoretical terms and conclusions can be used to bind educational handbooks of Theory and History of Pedagogy, methodological guides, as well as in the process of training and retraining of the legal personnel.
- The research results can be used during the teaching of the "Legal Pedagogy" discipline.

The Research Contents and Structure. The research includes Introduction, six chapters, conclusions, list of cited publications. The thesis consists of 311 pages.